ԵԿԵՂԵՑԻՆ...

ԲԱՆԱԼԻ ՀԱՄԱՐ. ՄԱՏԹԵՈՍ 16.15-19

15 Նրանց ասաց. Իսկ դո՞ւք ինչ եք ասում իմ մասին. ո՞վ եմ: 16 Սիմոն Պետրոսը պատասխանեց ու ասաց. Դու Քրիստոսն ես՝ կենդանի Աստծու Որդին: 17 Հիսուսը պատասխանեց ու ասաց նրան. Երանի՜ քեզ, Սիմո՛ն, Հովնանի՜ որդի, որովհետև ոչ թե մարմինն ու արյունը հայտնեցին քեզ, այլ իմ Հայրը, որ երկնքում է: 18 ***Ես էլ քեզ ասում եմ, որ դու <u>Պետրոս</u> ես, և այդ <u>վեմի</u> վրա եմ կառուցելու ԻՄ եկեղեցին, և դժոխքի դռները նրան չեն կարողանա հաղթել:*** *19 Ես քեզ եմ տալու երկնքի արքայության բանալիները, և ինչ որ երկրի վրա կապես, կապված կլինի երկնքում, և ինչ որ երկրի վրա արձակես, արձակված կլինի երկնքում:*

Հունարեն «եկեղեցի» բառը ekklesia է:

Անգե 2.5-7 – ... այս տունը փառքո՛վ կլցնեմ,- ասում է Զորքերի Տերը:

Անգե 2.9 – Այս վերջին Տան փառքն առավել մեծ պիտի լինի նախկինից,- ասում է Զորքերի Տերը,- և այս տեղին խաղաղություն պիտի պարգևեմե,- ասում է Զորքերի Տերը:

I. ԵԿԵՂԵՑԻՆ ՔՐԻՍՏՈՍԻ ՄԱՐՄԻՆՆ Է՝ ԳՆՎԱԾ ՆՐԱ ԱՐՅՈՒՆՈՎ:

18 այդ վեմի վրա եմ կառուցելու ***ԻՄ եկեղեցին...***

Գործք Առաքելոց 20.28 – ...հովվեք Աստծու եկեղեցին, որ նա ձեռք բերեց (գնեց) ***<u>իր արյունով</u>****:*

Հայտնություն 5.9 – Եվ նոր երգ էին երգում ու ասում. Արժանի ես այդ գիրքը վերցնելու և դրա կնիքները բացելու, որովհետև մորթվեցիր ու ***ՔՈ արյունով ՄԵՋ գնեցիր*** *Աստծու համար բոլոր ցեղերից ու լեզուներից, ժողովուրդներից ու ազգերից:*

- ***Ահա թե ինչու Հիսուսն ասաց.***

  «Քանդե՛ք այս տաճարը, և երեք օրում ես կվերականգնեմ այն» (Հով. 2.19):

  Հրեաներն ասացին. Այս տաճարը քառասունվեց տարում է կառուցվել, իսկ դու երեք օրո՞ւմ այն կվերականգնես: <u>Բայց նա իր մարմնի տաճարի մասին էր խոսում</u> (Հով. 2.20-22):

- ***Եկեղեցին Քրիստոսի մարմինն է, իսկ դուք նրա մարմնի անդամներն եք:***

  Եփ.2:21 – 21 Նրա մեջ ամբողջ կառույցը ներդաշնակորեն միավորված աճում է, որպեսզի Տիրոջով սուրբ տաճար դառնա, 22 որի մեջ դուք էլ նրա հետ կառուցվում եք իբրև Աստծու բնակարան Հոգու միջոցով:

II. ԵԿԵՂԵՑՈՒ ՓԱՌՔՆ ԱՎԵԼԻ ՄԵԾ Է, ՔԱՆ ՍՈՂՈՄՈՆԻ ԿԱՌՈՒՑԱԾ ՏԱՃԱՐԸ:

*18 այդ վեմի վրա եմ **կառուցելու** ԻՄ եկեղեցին*

Բայց ես ասում եմ ձեզ, որ այստեղ տաճարից ավելի մեծը կա (Մատթեոս 12.6):

- ***Այս վերջին Տան փառքն առավել մեծ պիտի լինի նախկինից„***

  *Բ Մնացորդաց 7.1-3 – Երբ Սողոմոնը վերջացրեց աղոթքը, կրակն իջավ երկնքից, լափեց ողջակեզներն ու զոհերը, և Տիրոջ փառքը լցրեց տունը: Քահանաները չկարողացան մտնել Տիրոջ տունը, որովհետև Տիրոջ փառքը լցրել էր Տիրոջ տունը: Իսրայելի բոլոր որդիները երբ **տեսան իջնող կրակն ու Տիրոջ փառքը տաճարի վրա**, երեսնիվայր ընկան գետին՝ սալահատակի վրա, և երկրպագեցին՝ օրհնելով Տիրոջը՝ ասելով, թե նա բարի է, և նրա ողորմությունը հավիտյան է:*

  - ***Սողոմոն թագավորը Երուսաղեմի տաճարի նվիրագործման ժամանակ 22,000 արջառ և 120,000 ոչխար զոհ մատուցեց (Բ Մնաց. 7.5):***

    Եբր. 9.12– 12 Իսկ Քրիստոսը՝ ...իր իսկ արյամբ մեկ անգամ այն սրբարանը մտավ...

  - ***Աստվածաշունչը նշում է մոտ 120 քահանաների, որոնք փող են փչում տաճարի նվիրագործման ժամանակ... Նաև 20,000 քահանաներ, որոնք բաժանված էին 24 խմբի, որոնցից յուրաքանչյուրը ծառայում էր մոտ երկու շաբաթ:***

    Ա Պետրոս 2.9 – Բայց դուք ընտիր ցեղ եք, թագավորական քահանայություն, սուրբ ազգ, սեփական ժողովուրդ...

  - ***Բացի այդ, նա կազմակերպեց աշխատուժ՝ բաղկացած 70,000 բանվորներից, 80,000 քարահատներից և 3,600 վարպետներից:***

    Հայտնություն 7.9 – Սրանից հետո տեսա. ահա մեծ ամբոխ, <u>որին ոչ ոք չէր կարող հաշվել</u>, կազմված բոլոր ազգերից, ցեղերից, ժողովուրդներից ու լեզուներից, որոնք կանգնած էին աթոռի և Գառան առաջ՝ սպիտակ զգեստներ հագած և արմավենու ճյուղեր իրենց ձեռքերին:

- ***Հիսուսը չի մահացել մեռած, պառտված եկեղեցու համար:***

III. ԵԿԵՂԵՑԻՆ ՊԵՏՔ Է ԳՈՐԾԱԴՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ:

*18 ...այդ վեմի վրա եմ կառուցելու ԻՄ եկեղեցին, և **դժոխքի դռները նրան չեն կարողանա հաղթել**:*

- *Սատանան իրական է*
- *Մեր հաղթանակը հաստատ է*
- *Աստուծոյ սպառազինութիւնը հագէք*

Եփ. 1.22-23 – Եվ ամեն բան նրա ոտքերի տակ հնազանդեցրեց, նրան եկեղեցու գլուխ դրեց՝ ամեն ինչից վեր, որ է նրա մարմինը, այն լրումը, որ ամեն ինչ լցնում է ամեն ինչում:

IV. ԵԿԵՂԵՑԻՆ ԵՐԿՐԻ ՎՐԱ, ԻՆՉՊԵՍ ԵՐԿՆՔՈՒՄ:

Եբր. 12.22 – Բայց դուք մոտեցել եք Սիոն լեռանը և կենդանի Աստծու քաղաքին՝ երկնային Երուսաղեմին ու տոնախմբող բյուրավոր հրեշտակներին:

Հայտ. 19.7-8 – 7 Ուրախանանք և ցնծանք ու փառք տանք նրան, որովհետև Գառան հարսանիքը հասավ, և նրա կինը պատրաստեց ինքն իրեն: 8 Նրան տրվեց, որ հագնի սպիտակ, մաքուր և լուսափայլ բեհեզե, որովհետև բեհեզը սրբերի արդարությունն է:

Հայտ. 21.9-10 – 9 Նա խոսեց ինձ հետ ու ասաց. Արի՛, քեզ պիտի ցույց տամ հարսին՝ Գառան կնոջը: 10 Եվ ինձ Հոգով տարավ մի մեծ ու բարձր լեռ և ցույց տվեց ինձ սուրբ քաղաքը՝ Երուսաղեմը, որ իջնում էր երկնքից՝ Աստծու մոտից:

Անգե 2.9 – Այս վերջին Տան փառքն առավել մեծ պիտի լինի նախկինից...

ԻՆՉ Է ԱՍՈՒՄ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ՔԵԶ ԱՅՍ ՊԱՏԳԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ